# ԿԱՐԾԻՔ

*Ը.00.02 «Տնտեսություն, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Մհեր Սեյրանի Ցրանցուլյանի «Հարկային ծառայողների գործունեության գնահատման համակարգի կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ*

## *Ատենախոսության թեմայի արդիականությունը*

Անկախացումից հետո Հայաստանի Հանրապետությունում կարևոր հիմնախնդիր և տնտեսական մարտահրավեր է հանդիսանում հարկային արդյունավետ համակարգի ձևավորումը: Համակարգ, որի գործունեությունը առավելագույնս կնպաստի հարկահավաքման գործընթացի արդյունավետ կազմակերպմանն ու ստվերային տնտեսության կրճատմանը ՀՀ-ում: Հենց այս նպատակով ՀՀ-ում ձևավորվել և փորձարկվել են հարկային համակարգի մի շարք մեխանիզմներ ու գործիքներ, որոնցից շատերը գործում են նաև այսօր: Կատարված միջոցառումները միտված են եղել հարկային համակարգի բարեփոխումներին և հանդիսացել են հարկային մարմնի կոնկրետ ժամանակաշրջանի զարգացման ռազմավարության բաղկացուցիչ մասը:

Եվ չնայած հարկային համակարգի ձևավորումից ի վեր ներդրվել են բազմաթիվ համակարգեր, այնուամենայնիվ հարկային համակարգում բարեփոխումները արդիական են, անընդհատ և շարունակական: Հարկային արդյունավետ համակարգի ձևավորումը հանդիսանում է կարևոր հիմնախնդիր, ինչի համար անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրել և վերլուծել ՀՀ հարկային մարմնի ռազմավարությունները, գնահատել ներդրված համակարգերի արդյունավետությունը՝ առաջարկելով հարկային բարեփոխումների ուղղություններ:

ՀՀ-ում հարկերը կազմում են պետական բյուջեի եկամուտների շուրջ 95%-ը, ուստի հարկային բարեփոխումների իրականացումը չպետք է լինի ինքնանպատակ: Արդյունավետ հարկային համակարգ ձևավորելու և հարկային բարեփոխումներ իրականացնելու համար՝ շատ կարևոր է հասկանալ, թե հարկային համակարգում կառավարման ինչ խնդիրներ կան: Վերջիններս հարկային համակարգում առաջանում են հարկային համակարգի կողմից իրականացվող գործառույթների անարդյունավետ գնահատման կամ գնահատման բացակայության պատճառով: Գնահատելով հարկային ծառայողների գործառույթները, դրանց իրականացման անհրաժեշտությունը և արդյունավետությունը՝ կարելի է

բացահայտել հարկային համակարգում կառավարման խնդիրները և այն մեխանիզմները, որոնցով հնարավոր է դրանք լուծել, ինչպես նաև արդյունավետ հարկային համակարգ ձևավորելու հնարավորությունները: Այս տեսանկյունից կարևոր դեր ու նշանակություն ունեն հարկային ծառայողների գործառույթների գնահատման հարցերի ուսումնասիրությունը: Էլ ավելին, հարկային ծառայողների գործառույթների գնահատման համակարգի ձևավորումը այժմեական է, և այդ համակարգի ձևավորումից է ինչ-որ չափով կախված արդյունավետ հարկային համակարգի ձևավորումը: Սրանով էլ պայմանավորված է թեմայի հրատապությունը և արդիականությունը:

## *Հետազոտության նպատակը և հիմնական խնդիրները*

Հետազոտության նպատակն է սահմանել՝ ձևավորել հարկային ծառայողների գործունեության գնահատման հայեցակարգ և նախանշել վերջինիս այն ուղղությունները, որոնց կիրառմամբ կմեծանա հարկային համակարգի կառավարման արդյունավետությունը: Հետազոտության նպատակից են բխում հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել հարկային ծառայողների գործառույթների իրականացումը,
- ✓ բացահայտել հարկային ծառայողների կողմից իրենց գործառույթների իրականացման ժամանակ առաջացող խնդիրները,
- ✓ բացահայտել հարկային ծառայողների գործառույթների գնահատման և հարկային համակարգի արդյունավետության կապը, մշակել հարկային մարմնի վարքագծային նոր մոդելներ,
- ✓ բացահայտել հարկային ծառայողների անարդյունավետ գնահատման կամ գնահատման բացակայության հետևանքները, մշակել գնահատման նոր մեխանիզմ,
- ✓ հիմնավորել հարկային ծառայողների գործառույթների գնահատման հայեցակարգի անհրաժեշտությունը, դերն ու նշանակությունը արդյունավետ հարկային համակարգ ձևավորելու գործում,
- ✓ մշակել հարկային ծառայողների գործառույթների գնահատման հայեցակարգի հիմնական ուղղությունները,
- ✓ նկարագրել հարկային ծառայողների գործառույթների գնահատման հայեցակարգի ակնկալվող արդյունքները և դրանց չափելիությունը:

## *Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը*

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններ և առաջարկություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը շարադրված է 150 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, աշխատանքի տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության առաջին՝ «ՀՀ հարկային համակարգի գործառույթների և դրանց իրագործման գնահատումը հարկային համակարգի ռազմավարական ուղղություն» գլխում դիտարկվել են հարկային համակարգի զարգացման ռազմավարությունները, քննարկվել է ստվերային տնտեսությունը՝ որպես հարկային մարմնի գործառույթների անարդյունավետ գնահատման և իրագործման արդյունք:

Ատենախոսության երկրորդ՝ «Հարկային մարմնի գործառույթների գնահատման գործող համակարգը և առկա հիմնախնդիրները ՀՀ-ում» գլխում կատարվել է հարկային մարմնի գործառույթների գնահատման կիրառվող մեխանիզմների բնութագրիչների, հարկային համակարգում առկա հիմնախնդիրների վերլուծություն, հիմնավորվել է հարկային մարմնի գործառույթների գնահատման նոր համակարգի ներդրման անհրաժեշտությունը:

Ատենախոսության երրորդ՝ «Հարկային համակարգի գործառույթների գնահատման նոր համակարգի ներդրումը և հարկային համակարգի արդյունավետությունը» գլխում հիմնավորվել է հարկային մարմնի գործառույթների գնահատման հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը և ներկայացվել է դրա ազդեցությունը հարկային համակարգի արդյունավետության վրա: Հեղինակի կողմից առաջարկվել են հարկային մարմնի գործառույթների գնահատման հայեցակարգի հիմնական ուղղությունները, հարկային ծառայողների գործառույթների գնահատման համակարգը:

Ատենախոսությունը եզրափակվում է եզրակացություններով, որտեղ ամփոփ ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները, հակիրճ ձևակերպված են կատարված եզրահանգումները և առաջարկվող հիմնական մոտեցումները:

### *Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը*

Ատենախոսի կողմից ներկայացված ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը կայանում են հետևյալում.

- Հարկային մարմնի գործառույթների գնահատման նպատակով որպես հարկային ծառայողների աշխատանքի գնահատման պարտադիր պայմաններ բացահայտվել են հարկային ծառայողների աշխատանքի գնահատման հիմնական սկզբունքները, մշակվել է հարկային մարմնի գործունեության հայեցակարգ և դրա ուղղությունները:
- Հարկային մարմնի գործունեության հայեցակարգով մշակվել են ամփոփային անհատության գնահատման և կրճատման գործառույթներ, որոնց իրականացումը պետք է միտված լինի հարկային մարմնի առաքելության իրականացմանը:
- Մշակվել է հարկային մարմնի կառավարման կազմակերպաիրավական նոր կառուցվածք, որի հիմքում դրվել է նախագծային կառուցվածքի մոդելը:
- Առաջարկվել են հարկային մարմնի կառավարչական վարքագծի նոր մոդելներ, որոնք բնութագրում են հարկային մարմնի վարքագիծը՝ հարկային ծառայողներին գործառույթներ պատվիրակելիս, այսինքն, օգտագործելով այդ մոդելները հարկային մարմինը վարքագծային առանձին մոտեցումներ պետք է ցուցաբերի աշխատողներից յուրաքանչյուրի նկատմամբ՝ կոնկրետ աշխատանք հանձնարարելով այն հարկային ծառայողներին, ովքեր իրենց վարքագծային տեսանկյունից առավել ամբողջական են համապատասխանում տվյալ աշխատանքի պահանջներին:
- Հարկային ծառայողների աշխատանքի գնահատման նպատակով գործող գնահատման մեխանիզմների փոխարեն մշակվել է գնահատման նոր մեխանիզմ, որի հիմքում ոչ թե հարկային ծառայողների պարգևատրումն է և քանակական գնահատականները, այլ հարկային ծառայողների աշխատանքի գնահատումը՝ կոնկրետ գործառույթին աշխատողի համապատասխանությամբ, հակառակ պարագայում՝ անհամապատասխանության պատճառների բացահայտումը: Արդյունքում անհրաժեշտ է վերապատրաստել հարկային ծառայողին, պատվիրակել գործառույթը կամ վերաձևակերպել այն:

***Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ***

1. Հեղինակի կողմից ներկայացված գիտական նորույթներից առաջինի ձևակերպման այս հատվածը՝ «*Հարկային մարմնի գործառույթների գնահատման նպատակով որպես հարկային ծառայողների աշխատանքի գնահատման պարտադիր պայմաններ բացահայտվել են հարկային ծառայողների աշխատանքի գնահատման հիմնական սկզբունքները*», մեր կարծիքով, չի կարող նորույթ համարվել:

2. 3.1 ենթագլխում (էջ 78) հեղինակը նշում է, որ իր գործունեության պատմության ընթացքում ՀՀ հարկային մարմնի կողմից ներդրվել են հարկային մարմնի գործունեության արդյունավետությունը գնահատող բազմաթիվ համակարգեր, որոնցից շատերը ներկայումս չեն գործում: Տվյալ համակարգերի ներդրման վերաբերյալ տեղեկատվությունը հարկային մարմինը ներկայացրել է ՀՀ ՊԵԿ կողմից հրապարակվող տարեկան հաշվետվություններում: Սակայն գոյություն չունի այնպիսի փաստաթուղթ, որն ամփոփ կգնահատեր ներդրված այդ համակարգերի արդյունավետությունը: Մեր կարծիքով, ատենախոսությունն էականորեն կշահեր, եթե հեղինակն ինքը գնահատեր այդ համակարգերի արդյունավետությունը:
3. 3.2 ենթագլխում հեղինակը հարկային համակարգում կառավարչական վարքագծի մոդելներ է առաջարկել, ներկայացրել է հարկային ծառայողների գործառույթների բաշխումն ըստ սերնդակների (աղյուսակներ 8, 9, 10): Սակայն պարզ չէ, թե ինչ տվյալների կամ ուսումնասիրությունների հիման վրա է հեղինակը նման վերլուծություն իրականացրել:

*Եզրակացություն*

Արված դիտողությունները, մեր կարծիքով, չեն ստվերում հետազոտության արդյունքները: Դրանք ատենախոսի հետագա ուսումնասիրությունների որակի բարելավման նպատակ են հետապնդում:

Մհեր Ֆրանգուլյանի թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն հետազոտություն է, որտեղ փորձ է արված լուծել տեսական և գործնական արժեքավոր և արդիական խնդիրներ:

Ատենախոսը ցուցաբերել է մասնագիտական և վերլուծական խորը գիտելիքներ, ստացված արդյունքները տեսական, մեթոդական և գործնական կարևոր նշանակություն ունեն:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթները:

Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ կառավարության 1997թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.02. «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,

տնտեսագիտության թեկնածու Կ. Հ. ԹՈՄԻԿՅԱՆ

Պարոն Կ. Թոմիկյանի

ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար,

բանասիրական

գիտությունների թեկնածու Մ.Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*08.12.2022թ.*